



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա.ՌԱ.ՔԵԼ Ա.ՌԱ.ՔԵԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԿԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԱՌԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱԾՄԲ



այկական առակն առաջին անգամ
գիտական լուրջ և մանրազնին ու-
սումնասիրովթյան առարկա է
դարձրել ակադեմիկոս Մարոբ:

Ակադեմիկոս Մարի ուսումնասիրովթյունն
ընդգրկում է մի խոշոր տւ պատկառելի աշ-
խատանք, որ նվիրված է հայ առակախոս
Վարդան Արգեկցուն և կրում է «Ծօրութ որոտ
Վարդառա վերնագիրը: Մեծանուն գիտնականն
այդ երկու հատորանոց ստվար աշխա-
տովթյան մեջ ո՛չ միայն շարադրում է իր
հետաքրքրական ու զուրջ գիտական դիտո-
ղովթյունները հայ առակախոս Վարդան Ար-
գեկցու կյանքի տւ գրական գործունեովթյան
մասին, այլև առաջին անգամ ուսումնասի-
րովթյան ու գիտական հետաքրքրովթյան ա-
ռաջ է զնում հայ գրականովթյան պատմու-
թյան մեջ մինչ այդ շքարուցված գիտական
այն հարցը, թե ի՞նչ աղերսակցովթյուն կա
հայ առակախոսի և հունական առակազրի
ստեղծագործովթյան միջև և թե ի՞նչ շափով
կամ ո՞ր ժամանակից է դրսեորդել հայկա-
կան և հունական առակների աղերսակցու-
ցովթյունը հայ գրականովթյան մեջ:

Ակադեմիկոս Մարի ուսումնասիրովթյունը
ցուց է տալիս, որ առակն առաջին անգամ
հայ գրականովթյան մեջ երևում է 4-րդ դա-
րում (մ. թ.), իսկ թե մինչ այդ ժամանակ
հունական առակնը դրսեորդվել է հայ գրակա-
նովթյան մեջ կամ բանավոր կերպով հայ
կյանքում, թե ոչ, պատմովթյունը լուրմ է դրա
մասին: Միակ պատմախանը, որը մարդու¹
տրվածք է առականության մեջ մեծ շափով մուտք է գոր-
ծել արևելյան, ինչպես և հայկական տարրը:
Դրան պետք է ավելացնել նաև այն, որ եղո-
պուսին վերագրված առակները ի հայտ են
եկել նրա մահից հետո, շատ ուշ ժամանակա-
շրջանում: Երկրորդ վերամշակումը եղել է մեր
թվականովթյան 3-րդ դարում, իսկ երրորդը՝

Հունական առակագիրը եղոպուսն (Այսո-
պու) է: Խշպես հայտնի է, եղոպուը կի-
սալիքնդար զեմք է: Նրա կենսագութունը
գրվել է շատ ուշ, մեր թվականության 14-րդ
դարում, բայց նրա մասին առաջին անգամ
հիշում է Հերոդոտոս պատմաբանը, որ ապ-
րել է մեր թվականովթյունից առաջ 5-րդ դա-
րում: Կենսագրական տեղեկություններից
երեսում է, որ Եղոպուը Փոքր Ասիայից է,
Փոյպութիայի Ամորիոն քաղաքից: Ապրելով
Փոքր Ասիայում, նա ճանապարհորդել է
Պարսկաստան, Բաբելոն, Եգիպտոս և այլն:
Այդ նշանակում է, որ նա քաջ ծանոթ է եղել
այդ երկրների ժողովուրդների կյանքին, ըմ-
բռնումներին ու նրանց կենցաղին, Եղո-
պուի ստեղծագործովթյան ակունքը հանդի-
սանում է ո՛չ միայն Փոքր Ասիայի հունա-
կան ժողովուրդը, այլև առաջարկոր Ասիայի,
Բաբելոնի, Ասորեստանի, Պարսկաստանի և
այլն ժողովուրդները, որոնց ծանոթ է եղել
առակագիրը: Ասակն, ընդհանրապես, որպես
կենդանական վեպի մնացորդ, ժողովրդական
ստեղծագործովթյուն է, բայց ոչ առանձին
անհատների: Ասակագիրները գրի են առել
ժողովրդական ստեղծագործովթյունը, մշա-
կել այն և իրենց կողմից էլ կատարել որոշ
ավելացումներ: Դատելով հունական առակի
մեջ դրսեորդված կենցաղային երևույթներից,
որոնք էապես արևելյան են և երկար դարեր
պահպանվել են արևելյան ժողովուրդների,
սրանց թվում է հայ ժողովուրդի մեջ, հիմք կա
ենթադրելու, որ Եղոպուի առակների ստեղ-
ծագործովթյան մեջ մեծ շափով մուտք է գոր-
ծել արևելյան, ինչպես և հայկական տարրը:
Դրան պետք է ավելացնել նաև այն, որ Եղո-
պուսին վերագրված առակները ի հայտ են
եկել նրա մահից հետո, շատ ուշ ժամանակա-
շրջանում: Երկրորդ վերամշակումը եղել է մեր
թվականովթյան 3-րդ դարում, իսկ երրորդը՝

մեր թվականության 4-րդ դարում, այսինքն՝ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ հայրեց սերտ տնտեսական ու քաղաքական հարաբերության մեջ են եղել հունական ժողովրդի հետ, և փոխադարձ կուստուրական հաղորդակցության ավելի նպաստավոր պայմաններ կային նրանց համար:

Հայ գրականության մեջ առակը, ինչպես ցուց է տալիս Մառը, առաջին անգամ արձանագրում է Փավստոս Բյուզանդությունը: Իր պատմության 3-րդ գլուխության Գլ. 3, էջ 28—29-ում, Փավստոսը գրում է.

«Նմանեալք լինէին այնմ հօտի խաշանց, որք զպահպանութիւն շանցն պահողաց պահապանացն ի բաց մերժեցին և կամօք իրեանց կերակուր պէշ թշնամութեան զայլոցն մատնեցան, ըստ նմանութեան մեծին աթենացոց քաղաքին»:

5-րդ դարում առակն օգտագործում է Դավիթ փիլիսոփան, որը իր «Դիրք Սահմանաց» փիլիսոփայական աշխատության մեջ գրում է հետևելալը.

«Գտանեմք երբեմն և զուտն և բարի, որպէս զոր ասելոց եմք: Ետ ոմն ցործն յաւանդ սուսեր և ի ժամանակի բարկութեանն չոգաւ խնդրել, որպէսզի զսպանումն արացէ: Իսկ նա ուրացաւ, թէ ոշինչ ետուր ցիս և սուեց: Եւ ահա սուտ, որ բարի գոյց (Գիրք Սահմանաց Դավիթ փիլիսոփամի, պրակք ԺԵ):

Այնուհետև առակը տեսնում ենք հաջորդ դարերի գրականության մեջ: Այսպիս, 9-րդ դարի պատմաբան Թոմա Արծրունին գրում է.

«Առ սա ինձ ի ճախ ելանէ քերթողական արուեստն, որ անէ. «Բազում անգամ ազուէսք թագաստրել խորհեցան, բայց շունք ոչ առին յանձն»: Լամ՝ «Ի դիպ ելանէ և հին առասպելն Ոլոմպիանու փիլիսոփայի, որ վասն առիւծուն և գուարակացն են բարանութիւնք. տեղեակ են արամ ուսումնասէր անձինք» (Պատմ. Թովմայի վարդ. Արծրունոյ, երրորդ դպր., Գլ. Ա., Թիֆլիս, 1917 թ., էջ 206):

Մառի ուսումնասիրությունը ցուց է տախի, որ Ոլոմպիանոսի անունով գոյություն ունի առակների ժողովածու հայ հին գրականության մեջ և Ոլոմպիանոսի անունը հիշվում է հայ մատենագրության մեջ և այդ Ոլոմպիանոսը ոչ չայլ ոք է, եթե ոչ եղուպուր: Մառը գրում է, որ Ոլոմպիանոսի մասին առաջին անգամ հիշում է Թոմա Արծրունին իր պատմության մեջ:

Առակի մասին ակնարկում է Մովսես Խորենացին Սահմակ Բաղրատունուն ուղղած իր խոսքի մեջ:

«Բայց զի՞նչ արդեօք տարիանք քեզ և

թիրասպեայ Աժդահակայ փծուն և անծոնի առասպեկքն իցեն. և կամ է՞ր սակա զմեզ պարսից անյարմար և անոն բանից, մանաւանդ թէ առաւել վասն անբանութեան առնես աշխատ... զի՞նչ քեզ այսորիկ կարուտութիւն առասպեկք սուտք, կամ զի՞նչ պէտք անմիտ, և անհանճար բանից յարմարանք: Մի՛ արդեօք յունական պերծ և ողորկ առասպեկքն իցեն հանդերձ պատճառաւ, որք զնշմարտութիւն իրաց այլարանաբար յինքեանս ունին թագուցեալը (Մովս. Խորեն., Պատմ. Հայոց, Տիգիս, 1913 թ., էջ 89—90):

Առակը 11-րդ դարում, Գրիգոր Մագիստրոսի ժամանակ, որպես գլուխական պիտելիք նույնիսկ ավանդվել է դպրոցներում, «առասպեկքավարժութիւն» անվան տակ: Գրիգոր Մագիստրոսն իր աշակերտներին՝ Բարսեղին և Եղիսեին գրած նամակում («Յաղագի խնդրոյ գրոց Արիստոտէլի» թղթում) նշում է այդ հանգամանքը Մառը գրում է, որ հոգական ճարտասանական դասագրքերի մեջ հատուկ գլուխ է հատկացված եղել առակներին, որը կոչվել է ուշը ինձօս. սակայն այդ գլուխը, ինչպես գրում է Մառը, հայերեն թարգմանված միակ հունական ճարտասանության գրքի մեջ բացակայում է (Mapp, Սборник прतиа Վարդան, էջ 435):

Ո՞վ է Ոլոմպիանոսը, որին հիշել է Թոմա Արծրունին և որո՞նք են նրան վերագրված առակները:

Այս հարցով զբաղվել է Մառը: Նրա ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ հունարեր շեն ունեցել Ոլոմպիանոս անունով առակագիր: Այդ անունով հայտնի է հույն հոետոր, որի մասին հիշել է Սվիդարը. բայց հայերենում կան Ոլոմպիանոսի առակները: Այս առակների լիակատար ժողովածուն հրատարակել են Միխթարյանները 1842 թվին իրենց մատենագրանի ձեռագրից: Ժողովածուն վերացրատարակել են 1854 թվին նույն Վենետիկի Միխթարյանները: Ոլոմպիանոսի առակները հրատարակվել են նաև Բարգվում, 1878 թվին (Գոյ Միխթարյալ) «Ոլոմպիանու և Եղուպասի ընտիր առակները» վերնագրի տակ:

Ոլոմպիանոսի առակների քանակի մասին ակադեմիկոս Մառը գրում է, որ դրանք քանակով անպայման ավելի քիչ են, քան Եղուպասի առակները: Եղուպասի առակների թիվը հաշվվում է 500-ից ավելի, մինչդեռ Ոլոմպիանոսի անվան հետ կապված է ընդամենը 15 առակ, որից մեծ մասը մեզ հասել է Կարդան Ալգեկցու առակների հետ, որպես Ալգեկցու առակ: Ոլոմպիանոսի առակները հետևելալներն են՝ «Ծծմայրը և գայլը»,

«Կրիան և ծին», «Ալյութը և գեղեցկուհին», «Ավիսը և պատանին», «Մերացած արյուծը և աղվեսը», «Եղքերում և ձագուկները», «Ճայն որդիշի փետուղներով», «Նապաստակները և գորոտերը», «Անգույղը և կարապը», «Էջն առուծի մորթով», «Դրուտը և աղվեսը», «Ոչխարները և գայլերը», «Արքաները և առյուծը», «Անգույղը պանրով և աղվեսը», «Կապիկը քաղաք Կառուցող» (Մատ, նույն, էջ 456): Վենեսիկի հրատարակության մեջ Ոլոմ-պիանոսին վերագրված է 23 առակ:

Ուսմպիանոսի առավելագույն մասին, ինչպես
գրում է Մարո, «ավելի պարզ ու ավելի ար-
դարացի» կարծիք է հայտնում Նորայի Բյու-
զանդացին, որը գրում է.

ժնուսքիս կարգն կը երեք, որ այսպիսի դի-
տողություն մը նեմ նաև Ոլովայի անու առա-
կաց թարգմանության վրա, որ հրատարակ-
յալ են Միխիթար Գոշի առավագ հետո. Այս
թարգմանության ժամանակն հայտնի չէ,
բայց կրնանի կարծեկ, որ Թ. դարեն առաջ
է, վասն զի թողմա Արծրունի յուր պատ-
մության մեջ (Գ. ա. էջ 137) կհիշե ԺԴ
առակը. վայելլություն դարձվածոց, ընտ-
րություն բառից, համառոտ և կորովի ոճ
մը, մասնավոր համելլություն մը կընծա-
յին հնգետասան առակաց. Հնգետասան
կըսեմ, վասն զի ակնյալ վեցտասաներորդեն
հայերեն լիզուն բոլորովին կփոխվի, կան-
գարդանա, կանչքի, պարզ կըսեմ՝ կոամ-
կանա: Այդ ԺԴ-ին առակը մասն են Աղ-
վիստագոց կամ Վարդանա առակաց» (Նո-
րայր Բյուլվանդացի, «Հայկական թառ-
անը Բայրութ» և Պահս. 1880 էջ 51).

Ծառապատճեամ, Կ. Կոլիս, 1885, էջ 31):
Եղոպասի առակները հայ գրականութիւնն
մեզ մուտք են փորձել Վարդան Այգեկցու ա-
ռակների միջոցով։ Այգեկցին եղոպասի ա-
ռակներին տվել է կրոնական պոմավորում
և քրիստոնեական-բարոյական՝ իմաստավո-
րում, մինչդեռ եղոպասի առակներն աշխար-
հիկ են, շոշափում են սոցիալական կյանքի
բազմազան կողմերը և զերծ են կրոնական
բնույթից։ Այս դիտողութիւննից բացառու-
թյուն են կազմում հետեւյալ առակները՝ ԽԲ,
ԽԳ, ԽԵ, Ծ, ԾԲ, ԿԶ, ԿԹ, Հ, ՀԵ, ՂԱ, ՂԳ,
ՂԵ, ՃԲ, ՃԶ, ՃԺ, ՃՃԱ, ՃՃԲ, ՃՃԳ, ՃՃԴ,
ՃՃԵ, ՃՃԶ, ՃՃԹ, ՃԻԳ, ՃԻԷ, ՃԼ; ՃԼԱ, ՃԼԳ,
ՃԼԴ, ՃԼԵ, ՃԼԶ, ՃՄ, ՃԿ, ՃԿԱ, ՃԿԴ, որոնք
կրոնա-բարոյական, եկեղեցական բնույթ
ունեն։

Մառը հայտնում է այն կարծիքը, որ Եզոպ-պոսի առակները մտադր են գործել հայկական գրականության մեջ ոչ միայն անմիջականորեն Հունականից թարգմանվելով, այլև սիրիական ու արաբական աղբյուրներից: Կան, սակայն, յեղուներ, — դրում է Մառը, —

բացի Հովհաննելից, որոնցից հայերը թարգմանել են գրական կոթողները։ Դա արաբական և մանավանդ ասորական լեզուն է։ Ուրովիչետև այդ լեզուներով գոյություն ունեն ծղոպասի առակները, բնականորեն հարց է ծագում՝ հայերը փոխ չեն առել հովհական առակները, թեկուզ և մասամբ, ասորիների և արաբների միջոցով։ (Մառ. նույն, էջ 466—467.)

Ի՞նչն է հիմք ծառայում Մառի համար այդ ենթադրովիյունը կառուցելու Մառն իր ենթադրովիյունը հիմնում է Լոխմանի վրա, որին վերագրված առակները, ըստ Մառի, մուտք են գործել Հայ ժողովրդի մեջ: Լոխմանն արաբական իմաստուն է, որի հոչակը տարածված է եղել ամբողջ Արևելքում: Նրա անունը և իմաստովիշան հողակը մինչև վերջին ժամանակներս հիշվել է անդրկովկասյան Հայ և աղդրեցանական ժողովուրդների մեջ: Մառը գրում է, որ Եղոպսոսի առակներն արաբական ժողովրդի մեջ տարածվել են Լոխմանի անունով, որ արաբական տառադարձովիշամբ արտաքերպել է Լոկման: «Լոխմանին վերագրված առակների մինչև այսօր մեզ հայտնի խմբագրուանները, — գրում է Մառը, — շարադրված են ուշ շրջանի, համենայն դեպս, վովքար խոսքին ավելի մոտ լեզվով և հեղինակի նկատմամբ հիմք են ընձեռում ենթադրելու, որ քրիստոնյա է, որ ապրել է Սիրիայում կամ Եփապտոսում: Արաբների մեջ ժողովրդական իմաստուն Լոխմանի անունը ծանոթ է նաև Հայերին 13-րդ դարից: Խաչատուր Կեշառեցին իր «Բարառնովինք»ի մեջ նրան անվանում է Լոխման, Սակայն Հայերեն լեզվով՝ պահպանված Եղոպսոսի առակների մեջ չկա մի առակ, որ անմիջական կախում ունենաւ արաբական տեքստից: Եթե առանձին առակների մեջ մենք մատնացուց չենք անում արաբական զուգահեռները, ապա այդ կախված է նրանից, որ արաբական խմբագրովիյունն առանձին մերձակցություն չունի Հայկականի հետ» (Մառ, նույն, էջ 467):

Ասորական ազդեցությամբ հունական առակների մուտքը հայ պահպանության մեջ Մարդ հիմնավորում է մի շարք եղբահանգումներով:

Մինչև 10-րդ դարը, ըստ Մատի, Հայկական գրականությունն ունեցել է զարգացման երեք էտապ: Այդ էտապներից առաջինը Մատի տեսության մեջ կոչվում է ասորական-քրիստոնեական, երբ Հայոց գրականության մեջ հշխել է ասորական կովտուրական ժառանգությունը, երկրորդը՝ Հոնական-բյուզանդական, որը մմի ժամանակի ամբողջովին ընդունել է Հայերին», երրորդը՝ ինքնուրուցին

զարգացման ուղին, որով ընթանալու փորձերն արվել են վաղուց (Մառ, նույն, էջ 505, 511):

Առաջին երկու էտապում, բայց Մառի, սկիզբ է առել և գարգացման առանձին թափ ընդունել թարգմանական գրականությունը Հայաստանում: Եղոպոսի առակների հայերեն թարգմանությունը համբնենում է, առաջին էտապին, ասորական-քրիստոնեականին: «Մեր եղոպոսյան առակները, — գրում է Մառը, — մոտենում են հոմական բնագրերին: Ի՞նչ արկե, դրանով դեռ չէր բացառվի նրանց թարգմանության հարաբորությունն ասորականից: Ինչպես հայտնի է, այդպիսի կողմնակի ճանապարհով հայերեն են թարգմանվել շատ կոթողներ, ինչպես, օրինակ, եվսեբիոսի «Եկեղեցական պատմությունը» (Մառ, նույն, էջ 505—506): Ընդունելով հանդերձ, որ չի բացառվում Եղոպոսի առակների հայերեն թարգմանությունն ասորականից, Մառն անմիջապես այդ տողերից հետո ավելացնում է: «Սակայն ոլ մի բանի մեջ չի արտահայտվում՝ ասորական յեզվի ազդեցությունը մեր հայկական թարգմանական տեքստի վրա: Երբեք առիթ չհանդիսացավ հաստատելու առակների հայկական խմբագրումների առանձին մոտեկություն ասորականին: Եղոպոսյան առակների հայերեն տեքստուն անմիջականորեն մոտենում է հունական տեքստին: Այդ է վկայում հայկական առակների տեքստերի, երբեմն նոյնանձան, առկայությունը հենց հոմական գրականության մեջ: Այդ են վկայում հայկական տեքստի մի քանի լեզվաբանական առանձնահատկություններն առակների մեջ: Վերջապես, այդ է վկայում Եղոպոսյան առակների խմբագրի հունական Ոլոմպիանու անունը, եթե նույնիսկ հավանական ընդունենք, որ այդ խոմքն ամրողովին վերցված է հունորության հոմական դասագրքի հայերեն թարգմանությունից: Բացի դրանից, հենց առակների կիրառումը դպրոցում, հունական վագոնային գումարություններից փոխառնված մանկավարժական ձև է: Անկասկածելի է Եղոպոսյան առակների նըշված նպատակադրումը հունական մեջ: Մակայն Եղոպոսի առակը հայերեն թարգմանությամբ կարող է պահպանվել անձեռնմընելի անաղարտության մեջ և, այնուամենայնիվ, բոլորումն չհամապատասխանել հունական ոլ մի խմբագրման, բայց այդ նշանակում է, որ հայերեն թարգմանության հունական իսկական բնագիրը կորել է կամ մեզ հայտնի չէ» (Մառ, նույն, էջ 506—507, § 512):

Եղոպոսի առակների հայոց գրականության մեջ մուտք գործելու մասին Մառի վերը բե-

րած վկայությունները միաբերան հաստատում են, որ արաբացիներից առաջ հայկական գրականությանը ծանոթ են եղել Եղոպոսի առակները դարեր առաջ, այն է, մեր թիվականության 4-րդ և 5-րդ դարերում: Մասսակարությունը կազմությունը գրականության մեջ կերպարվելու ժամանակին, այսինքն մուտքորոշենք 6-րդ և 7-րդ դարերում: Մասսակարությունը կազմության մեջ կերպարվելու ժամանակին, այսինքն մուտքորոշենք 6-րդ և 7-րդ դարերին» (Մառ, նույն, էջ 506—507):

Մառի այս դրույթը հաստատվում է պատմական այն իրողությամբ, որ արաբները 6-րդ դարում չեն ունեցել այն կուլտուրան, որը ի վիճակի վիճերի վայր ազգելու աշխատիանից վաղաւոց համաձայն հայ ժողովուրդը նրանցից փոխ առներ Եղոպոսի առակները, և այն էլ արաբականից թարգմանելով այն ժամանակ, երբ արաբական գիրն ու գրականությունը գեռ սաղմնավորման մեջ էին հնացիրենց՝ արաբների մեջ: Մյուս կողմից, արաբները 7-րդ դարի երկրորդ կեսին, տիրելով Անդրկովկասին մինչև 8-րդ դարը, մեր երկրից միայն ստացել են հարկ և շեն խառնվել ներքին գործերին, կուլտուրական հաղորդակցության և շիման մեջ չեն եղել Անդրկովկասիան ժողովուրդների հետ այնպես, ինչպես ասորիները և հունարեր՝ հայերի հետ: Հայաստամնը և Վրաստամնը իրենց ներքին կանքով, իրենց կուլտուրայով, կենցաղով ու կառավարման եղանակով եղել են ինքնուրուն, միանքամայն անկախ արաբացիներից: Սրանք այնպիսի պայմաններ են, որոնք մերժում են արաբական 6—7-րդ դարաշրջանում ազգեցության ենթադրությունը հայ գրականության վրա:

Հարց է ծագում, թե քանի՞ առակ է թարգմանվել հունարենից և ե՞րբ են թարգմանվել դրանք հայերեն: Այս հարցերի պատասխանը նույնպես տալիս է Մառը:

Վարդան Այգեկցու առակների ընդհանուր թիվը՝ 380 է, որից 73-ը, ինչպես գրում է Մառը, Եղոպոսի առակներն են, իսկ սրանցից 15-ը Ոլոմպիանոսինն են: Մառը, ինչպես վերը տեսանք, առակների հայերեն թարգմանության հնագույն ժամանակը հայերեն թարգմանության հնագույն ժամանակը հայերեն թարգմանության մեջ և, այնուամենայնիվ, բոլորումն չհամապատասխանել հունական ոլ մի խմբագրման, բայց այդ նշանակում է, որ հայերեն թարգմանության հունական իսկական բնագիրը կորել է կամ մեզ հայտնի չէ» (Մառ, նույն, էջ 506—507, § 512):

ակնարգներից, եղոպոսի առակները հիշվում են, իհարկե, մեջբերումների ձևով, նաև Ստեփանոս Առողիկի, Թոմա Արծրունու և Գրիգոր Մագիստրոսի երկերի մեջ։ Գրիգոր Մագիստրոսի թղթերից երևում է, որ նրա օրով առակները հայկական դպրոցներում դասավանդվել են որպես առանձին առարկա։ Մյուս կողմից, գրում է Մառը, իթե Հասատատիվ, որ 15 Եղոպոսյան առակների ժողովածովի հեղինակ Ոլոմահանուր նույն անձն է, ինչ որ Սվիտասի հիշած հույն սովիսատու Օլումպիանուր, և որ հայերն թարգմանված այդ 15 առակները պատկանում են ո՞չ թե հայ, այլ հույն Օլումպիանուրին, ապա ոժվար կլինի հերքել այն իրողությունը, որ Օլումպիանուր կողմից հայերն թարգմանված Եղոպոսյան 15 առակի այդ ժողովածովն Հայաստանում կազմվել է հելլենիստական ժամանակաշրջանում և հայերը ծանոթացել են Եղոպոսյան առակների այդ խմբի հետ հենց այդ ժամանակամիջոցով։

Մառին չի զբաղեցնում այն հարցը, թե հայկական ֆուլկորի մեջ, մինչև գրերի գյուտը, կարող էին գոյություն ունենալ Եղոպոսի առակները, թե ոչ։ Մառն առանձին կարենորություն չի տալիս այն հանգամանքին, որ Այգեկցուց առաջ, հիշյալ հայ գրական կոթողների մեջ, հիշվել են Եղոպոսի առակները և որ նույնիսկ դասավանդման նյութ են դարձել հայկական դպրոցներում 10—11-րդ դարերում։ Մառը կարենրագու, նշանակություն է տալիս Վարդան Այգեկցու կատարած դերին Եղոպոսի առակները հայոց գրականության մեջ փոխարքելու գործում։ Վարդան Այգեկցու նշանակությունն այն է, որ նա առաջինը 12-րդ դարում բարոյախոսական երանգավորում մտցրեց Եղոպոսյան առակների մեջ, առակներն արմատավորեց իր ժամանակի գրականության մեջ և ինքը հանդիսացավ գրական այդ ժանրի հիմնադիրը հայ գրականության մեջ։

«Մինչև 12-րդ դարի վերջը,— գրում է Մառը, — մինչև Վարդան Այգեկցու երեան գալը, մեջ հնաշողվեց հայ գրականության մեջ հանդիպել առակների գարողաշների կողմից բարոյախոսական նպատակով օգտագործվելու որևէ հետքի։ Եթե, սակայն, որևէ անհայտ քարոզչի մոտ առակը պատահաքար գործադրված էլ լինի, դրանով չի նսեմանա Վարդանի նշանակությունը։ Վարդանը նրանց մեջ հանդիսանում է գարողաշների նոր տեսակի ստեղծող, նրանց մեջ ձեռք է բերել տաղանդավոր քարոզչի բացառիկ համբավ, սկիզբ դնելով առակը բարոյախոսական նպատակով լայնորեն օգտագործելուն։ Ո՞քան պարզ են այն եղանակները, որոնց օգնությամբ հե-

րիաթներն ու զրուցները դառնում են առակի Հայ գրականության մեջ առ այժմ Վարդանին ենք ճանաչում առակի հիմնադիր, և հենց այլաբանությունները կարող են ծառայել որպես լավագույն օրինակ գրական այս տեսակի համար հայերի մեջ» (Մառ, նույն, էջ 368, § 382)։

Ակադեմիկոս Մառին զբաղեցրել է նաև Եւարոյախոսակի (Ֆիզիոլոգ) հարցը, որը հանդիսացել է աղբյուր Վարդան Այգեկցու համար։

«Ֆիզիոլոգ» (Physiologus) անվանվել է այն ժողովածուն, որ կազմվել է մեր թվականության 2—3 դարում, հավանորեն Ալեքսանդրիայում։ Այս ժողովածուի մեջ զետեղվել են հատվածներ անտիկ աշխարհի խորրագույն գրողներից՝ մեծ մասմբ Արիստոտելից, Պլինիուսից և ուրիշներից։ Ժողովածուն կազմել են քրիստոնեական կրոնի հետևողներ, որոնք հին գրողների ժողովածուի կազմում են 50 գլուխ, որոնք վերաբերում են բացառապես կենդանիներին, թռչուններին, միջատներին, հանգերին և թվարկում են նրանց հատկությունները ու տալիս նրանց սկիզբունները թացի իրական կենդանիների ներկայացուցիչներից, այստեղ տեղ են գտնել նաև երևակայական կենդանիներ՝ ինչպես ֆենիքսը (փյունիկը), միանդյանը, կենտավրոսը և այլն։ Եյսպիսով, ժողովածուի հեղինակների համար, բիբլիական ուսմունքը հիմք է ծառայել կենդանական, բուսական և համբային աշխարհների մեկնաբանման համար։

«Ֆիզիոլոգ» բառը հայերենում թարգմանվել է «Բարոյախոս»։ Հայկական «Ֆիզիոլոգ»ը այս անոնին ստացել է այն կենդանական առակներից, որ կազմում է հայկական «Ֆիզիոլոգ»ի բովանդուկությունը։ Այդ առակների թիվը հասնում է 60-ի (Մառ, նույն, էջ 424)։ Հայտնի է, որ «Ֆիզիոլոգ»ը վերաբերում է նպիփանոս կիպրացուն, որը թարգմանվել է հայերեն, չնայած, ինչպես գրում է Մառը, հայկական ձեռագրերի մեջ չի պահպանվել կիպրացու անոնը։ Հայաստանում ո՞չ միայն թարգմանվել է հոմական «Ֆիզիոլոգ»ը, այլև Հայաստանուն ունեցել է իր «Ֆիզիոլոգ»ը, որ գրել է 60 առակ, որոնք գրեթե բոլորը, կենդանական վեպ են, ինչպես՝ «Վասն բորենոյ», «Վասն քարադրողչ», «Վասն արշոյ», «Վասն տատրակի» և այլն (տես Մառի նույն գրքի հավելվածը)։

«Ֆիզիոլոգ»ի բնագրում կան գլուխներ թանկագին քարերի մասին, գրում է Մառը։ Հայկական ժողովածուի մեջ կան մի քանի առակներ, որոնց մեջ տեղ են գտնել զանազան քարերի իսկական կամ կեղծ հատկու-

թյունների: Սակայն այս առակները կազմելու ժամանակ, ժողովածուի հեղինակները օգտագործել են Հատուպի շարադրով թյուններ թանկագին քարերի մասին, ըստ որում, այս շարադրով թյուններից վերցրել են նկարագրական մասը և իրենց կողմից ամելացրել բարոյական մասը՝ մեկնարանությունները» (Մառ, նույն, էջ 427):

«Ֆիզիոլոգաք ոչ միայն թարգմանվել է Հայրեն, այլև նա հաճդիսացել է աղբյուր Վարդան Այգեկցու համար: Այգեկցու ժողովածուի մեջ աֆիզիոլոգից մուտք են գործել մի շարք առակներ, որոնք նշված են Մառի աշխատովթյան մեջ:

«Ֆիզիոլոգաք նշանակությունն այն է, որ նա ծառայում է որպես աղբյուր Վարդան Այգեկցու համար: Թե՛ Վարդան Այգեկցին և թե՛ նրան հետևողները, ըստ Մառի, իրենց առակների մեջ նյութը նրանից են վերցրել: Ֆիզիոլոգաք Վարդանի առակների ժագելուց առաջ հանդիսացել է մի անոթ, գրում է Մառը, որի մեջ պահպանվել են օտար տարրերը. «Մեղ հայտնի» է Ֆիզիոլոգի խառն տեսակների գոյությունը, — գրում է Մառը, — որոնց մեջ աֆիզիոլոգաք հոդվածներին միահյուսվում են Եղոպսիսի առակները կամ Վարդանի այլաբանությունները, այսինքն որոնց մեջ ունենք աֆիզիոլոգաք-Եղոպսիս և աֆիզիոլոգաք-Վարդան ժողովածուն» (Մառ, նույն, էջ 427):

Մառը հայկական «Ֆիզիոլոգաք» ժամանակը սահմանում է 6—7 դարերը: Կենդանական վեպի քննությունը ցուց է տալիս, ասում է մատը, որ աֆիզիոլոգաք հասկանորեն վայելել է մեծ հեղինակություն կասիկ շըշանի հայկական գրականության մեջ և հայկական գրագետ հասարակության մեջ: Մառը ցուց է տալիս, որ աֆիզիոլոգաքն օգտագործել են Եզնիկը և Դավիթը, ինչ որ նշանակում է՝ աֆիզիոլոգաք հայերին հայտնի է Եղել գեռ 5-րդ դարից:

«Ֆիզիոլոգաք հայկական տեքստը թարգմանվել է Հոնարենից: Այդ թարգմանությունը, ինչպես կարում ենք Մառի ուսումնակրության մեջ, ընորոշ է նրանով, որ հարազատորեն լի արտահայտում հայերեն լեզվով հոնական բնագրի ո՛չ միայն բառերը, այլև դարձվածները: Ուշագրավ է, ասում է Մառը, այն հանգամանքը, որ հայերեն թարգմանության մեջ մուտք են գործել գաղանների անոմններ՝ հումական վեզկով. դրանք են՝ ալթողոփոս (առարողոփոս) *, պանթեր (պանթեր), կետ (կետոս), կաստորիոս (կաստորիոն), կոկորիկոս (կոկորիոս), փյումիփո (փյումիփո), ինքնիմոն (ինքնմոն),

պերիդեքսիոն (պերիդեքսիոն), քաղանդրոս (խալանդրիոս) ** և այլն:

Հոնական «Ֆիզիոլոգաք» հայերեն թարգմանվել է շատ վաղ ժամանակ: Միիթարյանները հոնական «Ֆիզիոլոգաքի հեղինակ համարում են, նպիգանոս Կիպրացուն և գորի վերնագիրը թարգմանել են այսպես՝ «Մրրոյն, նպիգանոս Կիպրացու արքակիուկուպսի իսպառախոսին» (եօ Ֆիզիոլոգոս աշխատավայում լեզուն Պերի տո՛ւ լե՛ռնտոս): Հոնական բնագիրը ցուց է տալիս, որ Միիթարյանների թարգմանությունը հոնարենի բառացի և ճշգրիտ թարգմանությունը չէ: Բառացի թարգմանությունը կլինի՝ «Թարգումասիսություն»: Մյուս կողմից, «բարոյախօս» բառը Միիթարյանների կողմից ճիշտ չէ գործածված: Դա, ինչպես նկատում է Մառը (հիմնվելով Գալուստ Տեր Մկրտչյանի դիտողությունների վրա), վուգարիզմ է, որ հետագայում մտել է ձեռագրերի մեջ արտագրողների անդրագիտության հետևանքով: Գալուստ Տեր Մկրտչյանը ճիշտ թարգմանությունը համարում է ո՛չ թե «բարոյախօս», այլ Գալուստ Մառը (բարոյախօս): Մառը ճիշտ է համարությունը և հիմնավորում է գիտական-լեզվաբանական փաստարկումներով: Ֆիզիս (Փուսիս) բառը, գրում է Մառը, թարգմանվում է բնություն, բրոմ: արմատից, բայց հոնական փուսիսի (ՓՈՒԾ) բառը փուսիոլոգու (ՓՍՈԼԾՅՈՒՑ) բարդության մեջ թարգմանվի մոտ ստացել է ո՛չ թե «բնություն» իմաստը, այլ «բարբ», «կենցաղածեա» և այստեղից հոնական փուսիոլոգու բառը թարգմանում է «բարոյախօս» (сказатель нар-БОВ): Մառը հայերեն թարգմանվի այդ բառը բնիցնում է հոնական վերնագրից, որ հետեւյալն է. Էկ տու փուսիոնովու, պերի Ֆուսենու կայ ե՛յլու ծո՛նն կայ երպետո՞ն: Հայերենը կլինի՝ «Ի բարոյախօսէ յաղագս բնութեան և բարուց կենդանեաց»: Հայ թարգմանից հոնական փուսիսը թարգմանել է «բարբ», «հետեւյալ» փուսիսին հաջորդող ընծու (Ե՛յլոս) բառին, որ հոնարեն նշանակում է տեսակ, գործողության կերպ (Մառ, «Ֆիզիոլոգ», էջ 333VIII, § 12):

«Ֆիզիոլոգաքի հայերեն այս թարգմանության բնագիրը թարգմանվել է վրացերեն, Մառը մի շարք փաստերով հաստատում է, որ իսկապես վրացերենը թարգմանվել է հայերենից, իսկ հայերենը՝ հոնարենից, ընդուում, վրացական թարգմանությունը, որ

**) Н. Я. Марр. Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. VI.

*) Փակագերում հոնարեն բառեր են:

կատարվել է հայերեն բնագրից 10-րդ դարում, ողավագույն կերպով պահպանել է Հին հայկական «Ֆիզիոլոգ»ը, քան մեզ հասած հայկական օրինակները» (*Մառ.*, նույն, էջ VIII): Հայկական թարգմանությունը հումարենից, որ վրացերենի համար հանդիսացել է վրացականի համար տեքստ, կատարվել է, ըստ երևույթին, 6-րդ կամ 7-րդ դարում: Մառը վրացական 10-րդ դարի թարգմանության օրինակը համարում է Շատրերտի ձեռագրերը, իսկ հայկականի ձեռագրերը՝ Խորնաշատինը: Խորնաշատի այս օրինակը, ըստ Գալուստ Տեր Մկրտչանի (որի հետ համաձայն է և ինքը Մառը), հունական թարգմանությունների ժողովածու է և ոչ թե ամբողջովին ծպիֆանոս Կիպրացունը, ինչպես ընդունել են Միհիթարյանները: Համաձայն Գալուստ Տեր Մկրտչանի Մառին ուղղած նամակի, այդ ժողովածուն պարունակում է հատվածներ թարգմանված հունարենից, Եպիփանոսից, Անննոսից, Արիստոտելից և Պլատոնից (*Մառ.*, նույն, էջ XLVII, § 18):

«Թարոյափուսախ հունարենից թարգմանված հայերեն տեքստը, ինչպես և այս վերջինից

թարգմանված վրացերենը, պարունակում է հետևյալ առակները՝ Վասն մողէզի, Վասն առիւծու, Վասն ավողովու, Վասն քարանց հրահանաց, Վասն սղոցի, Վասն քաղանդրի, Վասն հաւալսան, Վասն բուոյ, Վասն արծուոյ, Վասն փինիրս թռչնոյ, Վասն յոպոյ, Վասն ցոոյ, Վասն իժի, Վասն աւձի, Վասն մրջման, Վասն յուշկապարկաց և իշացլոց, Վասն ոզնուոյ, Վասն աղուիսու, Վասն յովազի, Վասն վահանակրէի, Վասն կաբաւոյ, Վասն անգեղ, Վասն մրջիւնառիւծու, Վասն աքսոյ, Վասն մթեղզերի, Վասն կաստորի, Վասն բորենոյ, Վասն շնչրոյ, Վասն ինքնիմոնի, Վասն պերիդիքսոն ծառոյ, Վասն ագուալոյ, Վասն տատրակի, Վասն ծիծուան, Վասն եղջերուի, Վասն արջոյ, Վասն ժրահաւոյ, Վասն մեղուի, Վասն ագուալոյ, ընդամենը՝ 38:

Վարդան Ալգեկցին անդրանիկ առակագիրը հանդիսացավ հայկական գրականության մեջ, որ իր փայլուն տաղանդով, առակների մեջ արտացոլեց իր ժամանակաշրջանի ողցիական տրամադրություններն ու ձրգտումները:

